

«ԱՆՁՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՐԱՆՔ» ԻՄԱՍՏԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ)
ԽՈՒՄԲԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ*

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ

Բանալի բառեր՝ «անձնական զարգարանք», իմաստային խումբ, փոխառություն, ապարանջան, մատանի, ականջող, վզնոց, կրծքազարդ, գլխազարդ և մագերի զարդ, ոսկի, արծաթ:

Նախաբան

Առաջին զարդերն ի հայտ են եկել հագուստի հետ՝ լինելով ոչ թե պճնանքի ու գեղագիտության, այլ սնտրիապաշտության արտահայտություն: Հետագայում, երբ արդեն հասակավում է գեղեցիկի դրսևորումը, զարդերը, բացի գեղագիտական անհրաժեշտությունից, դառնում են նաև դասակարգային տարբերակման արտահայտչամիջոց, հասարակական դիրքորոշումն ամրագրելու յուրահատուկ ձև, իսկ քրիստոնեական ուսմունքի տեսանկյունից՝ ավելորդություն:

XVIII–XX դդ., ինչպեսև նախորդ ժամանակաշրջաններում, զարդերը հայկական ազգային տարազի պարտադիր և անբաժան մասն են եղել, որոնք օգտագործվել են ինչպես առանձին՝ որպես վզնոց, կրծքազարդ, մատանի, ապարանջան, քթի օղ, ականջի օղ և այլն, այնպես էլ հանդերձանքի մասեր՝ ամրացվելով գլխի հարդարանքին և զգեստի տարրեր հատվածներին:

Մեզ հասած հին զարդերի մասին տեղեկությունները թերի են, ուսումնասիրությունները՝ քիչ: Անվանումների մի զգալի մասն ավանդվել են հին հայերենից, որոնցից ոչ բոլորի ծագումն է հայտնի:

Այսօր էլ «անձնական զարդարանք» իմաստային խումբը շարունակում է համալրվել ոչ միայն նորակազմ զարդանվանումներով, այլև՝ օտարաբանություններով ու նորագույն փոխառություններով:

Զարդ

«Անձնական զարդարանք» իմաստային խմբի ընդհանրական բառը զարդն¹ է զ (նախդիր) + արդ «ձև, կարգաւորություն, սարք» (ՀԱԲ, Ա, 306–

* Ներկայացվել է 16. II. 2024 թ., գրախոսվել է 08. IV. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:

¹ Բերված օրինակները հետևյալ բառարաններից են. Ա ճ ա ո յ ա ն (այսուհետ՝ ՀԱԲ). 1971–1979, հ. Ա–Դ, Ջ ա հ ու կ յ ա ն (այսուհետ՝ ՀՍԲ). 2010, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետ՝ ԺՀԼԲԲ). 1969–1980, հ. 1–4, Ա դ ա յ ա ն (այսուհետ՝ ԱՀԲԲ). 1976, Ս ա ք ա պ ե տ ո յ ե ա ն (այսուհետ՝ ԱԱՆԲ). 2011, Ղ ա գ ա ր ե ա ն (այսուհետ՝ ԳԲ). 2000, հ. 1–2, Մ ա լ ի ա -

307): Այն բազմիմաստ բառ է և ունի հետևյալ նշանակությունները՝ «1. մարմնի այս կամ այն մասը զարդարելու ավել կամ պակաս չափով թանկագին կամ գեղեցիկ իր (մատանի, ապարանջան, մանյակ և այլն), 2. տանը իբրև զարդարանքի առարկա ծառայող գեղեցիկ և թանկագին իր, 3. զարդաքանդակ, զարդանկար, 4. փխբ. իր շրջապատում դրական հատկություններով բարեմասնություններով աչքի ընկնող անձ, 5. փխբ. կանաչություն, բուսականություն, 6. կենդանական աշխարհը (բնության համար), 7. խոսքի մեջ կրկնություն, հավելադրություն և այլն, որոնք խոսքը գեղեցկացնում են, 8. գործվածքի կամ այլ առարկայի վրա հյուսած կամ նկարած պատկեր, 9. փխբ. անբան՝ արտաքին փայլով անձ, 10. իր տեսակի առարկաների մեջ գերազանց հանդիսացող իր՝ առարկա, 11. փխբ. իր պաշտոնին՝ կոչմանը անհամապատասխան միայն արտաքին փայլով ու ձևով աչքի ընկնող անձ» (ԺՀԼԲԲ, 2, 12):

Մեզ հետաքրքրող իմաստային խմբի միավորները ստորև գործածվում են առաջին իմաստով, ըստ այդմ էլ, որպես զարդ բառի հոմանիշներ, առանձնացրել ենք՝ զարդարանք, արդուզարդ, հարդարանք, պաճուճանք, պերճանք, պճնանք, պճնություն, սաղք (ժղ.), պճինք (հզվդ.), վայլածք (բրբ.) և այլն²:

Զարդ արմատը բառակազմական մեծ ակտիվություն ունի. այն, որպես սկզբնաբաղադրիչ, հանդես է գալիս հետևյալ բաղադրություններում՝ ածանցավոր՝ զարդային (ԺՀԼԲԲ, 2, 13), զարդավոր (ԺՀԼԲԲ, 2, 14), զարդիկ (ԺՀԼԲԲ, 2, 15), զարդարան (ԺՀԼԲԲ, 2, 14), զարդարանք (ԺՀԼԲԲ, 2, 14), զարդագործ (ԺՀԼԲԲ, 2, 12), բարդ՝ զարդախուց (ԺՀԼԲԲ, 2, 13), զարդասենյակ (ԺՀԼԲԲ, 2, 13), զարդասրահ (ԺՀԼԲԲ, 2, 14), զարդասեր (ԺՀԼԲԲ, 2, 13), զարդատարկա (ԺՀԼԲԲ, 2, 13), զարդոսկի (ԺՀԼԲԲ, 2, 15), զարդատուփ (ԺՀԼԲԲ, 2, 14), զարդարկղ (ԺՀԼԲԲ, 2, 14), արևմտահայերենում՝ զարդանտուկ (ԱԱՆԲ, 97), բարդածանցավոր՝ զարդապահարան (ԺՀԼԲԲ, 2, 13), զարդասիրություն (ԺՀԼԲԲ, 2, 14) և այլն: Որպես վերջնաբաղադրիչ՝ առկա է հետևյալ կազմություններում՝ անզարդ (ԺՀԼԲԲ, 1, 89), արդուզարդ (ԺՀԼԲԲ, 1, 214), կախազարդ (ԺՀԼԲԲ, 3, 16), պճնազարդ (ԺՀԼԲԲ, 4, 208), եզրազարդ (ԺՀԼԲԲ, 1, 542), թափազարդ (ԺՀԼԲԲ, 2, 118) և այլն:

Զարդ արմատից կազմվել են նաև մի քանի զարդերի անուններ, ինչպես՝ զարդափսաչ «զարդարանք ծառայող խաչ, խաչածե զարդ» (ԺՀԼԲԲ, 2, 13), զարդափեսուուր «փեսուուր, որ կանայք կրում են գլխարկի վրա իբրև զարդ» (ԺՀԼԲԲ, 2, 14), զարդաքար «1. թանկագին քար, որից զարդ են պատրաստում, 2. իբրև զարդ ծառայող քար, քարից պատրաստված զարդ, 3. վրան զարդեր փորագրված քար» (ԺՀԼԲԲ, 2, 14), զարդիկ «փոքրիկ զարդ» (ԺՀԼԲԲ, 2, 15), զարդոսկի «որպես զարդարանք գործածվող ոսկի, ոսկյա զարդ» (ԺՀԼԲԲ, 2, 15) և այլն:

ս ե ա ն ց (այսուհետ՝ ՀԲԲ). 1944–1945, հ. 1–4, Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետ՝ ՀԼԲԲ). 2001–2012, հ. Ա–Է, Սարգսյան. 1991, Ճէր է ճ ե ա ն արք., Տօնիկեա ն եւ Տէր Խաչատուրեա ն. 1992, հ. 1–2, Ղազարյան, Ավետիսյան (այսուհետ՝ ՄՀԻ). 2009, Հայրապետյան (այսուհետ՝ ՕԲԲ). 2011, Սուքիասյան (այսուհետ՝ ՀԼՀԲԲ). 2009, Նոր բառեր (այսուհետ՝ ՆԲ). 2015:

² Սուքիասյան (այսուհետ՝ ՀԼՀԲ). 1967, 196:

Թանկարժեք քարերի ու զարդերի տարբեր տեսակների անվանումների վկայություններ կան *V* դարից (կամ ավելի վաղ), որոնք, ըստ ծագումնաբանության, ներկայացնում են հետևյալ պատկերը.

ա) բնիկ հայերեն բառեր՝ զարդ (ՀԱՅ, Ա, 306), պալար «զարդ» (ՀՄԲ, 615), ակն «գոհար, թանկարժեք քար» (ՀՄԲ, 30), քար (ՀՄԲ, 778), ուլն «ուլունք» (ՀՄԲ, 747), մատանի («մատ» բնիկ հնդեվրոպական արմատից) (ՀՄԲ, 512), գինդ (ՀԱՅ, Ա, 557), օղ (ՀԱՅ, Դ, 612), արծաթ (ՀԱՅ, Ա, 317) և այլն:

բ) Իրանական փոխառություններ՝ աշխարաւանդ «թագի կապ» (ՀՄԲ, 64), ապարաւշ «մի գլխազարդ» (ՀՄԲ, 68), դամուանկի «կանացի մի գլխազարդ» (ՀՄԲ, 182), ճիտակ «մարգարտյա զարդ, մանյակ» (ՀՄԲ, 493), ճամբար «մանյակ, գլխակապ» (ՀՄԲ, 487), գո(ր)շապա(ր)անդ «ականջօղ» (ՀՄԲ, 170), ապարանջան «ապարանջան, ձեռքի մանյակաձև զարդ» (ՀՄԲ, 68), պահանջանք «ապարանջան» (ՀՄԲ, 617), խալխալ(այ) «ապարանջան» (ՀՄԲ, 309), ապիզակ «չքանչան» (ՀՄԲ, 69), բահուանդ «կանացի մի զարդ» (ՀՄԲ, 114), կշտապանակ «մի զարդ» (ՀԱՅ, Բ, 612), գոհար «թանկագին քար, գոհար» (ՀՄԲ, 166), դահանակ (դահակն) «թանկագին քար՝ հասպիս, մալախիտ» (ՀՄԲ, 181), լալ «մեղեսիկ, չափյուղա, սուտակ» (ՀՄԲ, 289), լաջուարդ «մի կապտագույն թանկագին քար, գոճագմ, պարտիզաքար, լաջվարդ, լաճվարդ» (ՀՄԲ, 292), պիճատի «մի թանկագին քար» (ՀՄԲ, 637), պատժախ «մի տեսակ սուտակ» (ՀՄԲ, 625), փերուզակ «մի տեսակ կիսաթանկարժեք քար, փիրուզ» (ՀՄԲ, 763), քարուպայ «դեղին սաթ» (ՀՄԲ, 779) և այլն³:

Ըստ Լավրենտի Հովհաննիսյանի՝ իրանական փոխառությունների մեծ մասը ժողովրդախոսակցական լեզվում չեն կիրառվել կամ ունեցել են տարածքային (բարբառային) սահմանափակություն: Դրանք հիմնականում գրքային բառեր են⁴:

գ) Հունական փոխառություններ՝ մանեակ «վզնոց» (ՀՄԲ, 507), որմիակ «վզնոց, մանյակ» (ՀՄԲ, 608), կոնքեո «հայրապետական մի զարդ» (ՀՄԲ, 419), ադամանդ (ՀՄԲ, 21), ակատ (ՀՄԲ, 29), մարգարիտ (լատ.<հուն.) (ՀՄԲ, 515), սարգիոն (ՀՄԲ, 671), տապալիոն (ՀՄԲ, 735), ամարաքթոս «գմրուխտ» (ՀՄԲ, 685), պորփիր «մի թանկարժեք քար» (ՀՄԲ, 642), ուփիտէս «մի թանկարժեք քար» (ՀՄԲ, 609), եմատիտէս «հեմատիտ, կարմրաքար, կարմիր երկաթաքար» (ՀՄԲ, 216) և այլն:

դ) Ասորական փոխառություններ՝ թարշիշ «հակինթ» (ՀՄԲ, 260), չափիւղայ «չափյուղա» (ՀՄԲ, 584), սափիրայ «չափյուղա» (ՀՄԲ, 673), սոփեր «չափյուղա» (ՀՄԲ, 691) և այլն:

ե) Արաբական փոխառություններ՝ սեպաճ «սև սաթ» (ՀՄԲ, 676), տլիսմ «հուռութք, թալիսման» (ՀՄԲ, 730), տլսմաթ «թալիսման, հուռութք» (ՀՄԲ, 730) և այլն:

զ) Թյուրքական փոխառություններ՝ ալթաղայ (օթաղայ) «գլխի կամ գլխարկի վրա ամրացված փետրազարդ» (ՀՄԲ, 101) և այլն:

Մի շարք զարդանունների ծագումը պարզ չէ, ինչպես՝ քողեք «թևկապ, ապարանջան» (ՀՄԲ, 790), փակտիք «մի տեսակ ապարանջան» (ՀՄԲ,

³ Տե՛ս նաև Ա ճ ա ո յ ա ն. 2013, 306–307:

⁴ Հ ո վ հ ա ն ի ս յ ա ն. 2012, 43:

756), աղթաման (աղցաման)⁵ «ապարանջան» (ոտքի) (ՀՄԲ, 37), քուչկեն (քոչկեն, քուչկեն) «սարկավագուհիների փոքրիկ ուրար» (ՀՄԲ, 787), քայո «մանյակ» (ՀՄԲ, 775), ովրա «օղ (ականջօղ, քթօղ)» (ՀՄԲ, 605), ճեղանակ (ճեղենակ) «թելավոր զարդ» (գլխի կամ զգեստի) (ՀՄԲ, 491), փողոշուկ «կանացի մի գլխազարդ» (ՀՄԲ, 766), խիր «կանացի մի զարդ» (ՀՄԲ, 332), երակալթ «մի զարդեղեն» (ՀՄԲ, 220), կածան(ք) «կանացի մի զարդ» (ՀՄԲ, 374), մեհենջանք «զարդարանք» (ՀՄԲ, 521), տապակ «մի տեսակ վահանաձև զարդ» (ՀՄԲ, 721), սուտակ «կարկեհան, սուտակ, մեղեսիկ» (ՀՄԲ, 690), գոճազմ «մի կապտագույն թանկագին քար» (ՀՄԲ, 166), դանկա (գանքա) «մի տեսակ թանկագին քար» (ՀՄԲ, 183), մուկուլա «թանկագին քար» (ՀՄԲ, 537), թիլա «մի թանկագին քար» (ՀՄԲ, 267), մեղեսիկ (մեկեսիկ) «մի տեսակ թանկարժեք քար, սուտակ» (ՀՄԲ, 522), մեշիա «մի թանկագին քար» (ՀՄԲ, 525), պարմուշա (պարմուշքա) «մի թանկարժեք քար» (ՀՄԲ, 632), պարմուշիտ/դ «մի թանկարժեք քար» (ՀՄԲ, 632), ռոմիա «մի տեսակ թանկագին քար» (ՀՄԲ, 658), սատիճ «մի տեսակ քար» (ՀՄԲ, 670) և այլն:

Բերված զարդանուենների մի մասը չի գործածվում արդի հայերենում, ինչպես՝ աշխարաւանդ, դամուանկի, կշտապանակ, պիճատի, պատժախ, քարուպայ, սմարաքթոս, որմիակ, ուփտես, եմատիտես, մեհենջանք, երակալթ, փողոշուկ, պարմուշա, սատիճ, մեշիա, ռոմիա և այլն: Մի մասը հնացած է արևելահայերենում, ինչպես՝ սարդիոն «դեղնակարմիր գույնի՝ մետաղակերպ օքսիդների կարգին պատկանող թանկագին քար» (ԺՀԼԲԲ, 4, 280), դրույսք «(հնգ.) ծամկալ, վարսակալ» (ԺՀԼԲԲ, 1, 535), խալխալ «(հնգ.) 1. լայնաշերտ մետաղյա ապարանջան, 2. բոժոժավոր մանյակ, որ կրում էին գյուղացի կանայք (այժմ քրդերը) ոտքերին կամ թևքերին, 3. արծաթե փոքրիկ օղ» (ԺՀԼԲԲ, 2, 464), գարգմանակ «(հնգ.) զինվորական սաղավարտի կամ խուլրի զարդ» (ԺՀԼԲԲ, 1, 374), մեհլեանդ «(հնգ.) կանացի շղթայաձև զարդ» (ԺՀԼԲԲ, 3, 511) և այլն. վերջինս արևմտահայերենում գործածվում է և՛ «կանացի գոհարազարդ ապարանջան», և՛ «ականջօղ» իմաստներով (ԱՆԵԲ, 216): Այս բառերը հիմնականում հանդիպում են գեղարվեստական գրականության մեջ, ինչպես՝ «Գլխին կրում էր փառավոր խուլրը, որի առջևի կողմից, ճակատի վրա, մարգարտաշար նարոտներով կապած էր արքայական ոսկյա գարգմանակը, որ փողփողում էր արեգնային ճաճանչներով (Բաֆֆի) (ընդգծումը մերն է– Լ. Ղ.)» (ԺՀԼԲԲ, 1, 374) կամ «Օհ, մեհլեանդ բերեք ինձ (Դանիել Վարուժան) (ընդգծումը մերն է– Լ. Ղ.)» (ԺՀԼԲԲ, 3, 511) և այլն:

Նկատելի է, որ բազմաթիվ զարդերի անվանումներ, հին գրական հայերենից անցնելով արդի արևելահայերենին, պահպանել են իրենց հիմնական իմաստները, ինչպես՝ մատանի, գինդ, օղ, ապարանջան, գոհար, ապիզակ, փրուզ, աղամանդ, մարգարիտ, մարջան, դահանակ, լալ, տապալիոն, կոնքեո, մանյակ, թարշիչ, շափյուղա, մեղեսիկ, քայո, սուտակ, քոլեք և այլն:

Ուլն արմատը՝ «1. մարգարտի հատ՝ հատիկ, 2. ապակեայ ծակ զարդագնդիկներ» իմաստով (ԳԲ, 2, 352), այժմ գործածվում է միայն ուլունք անեզական գոյականով (ԺՀԼԲԲ, 4, 581):

⁵ Աղցաման (աղթաման) բառի քննությանն անդրադարձել է Վազգեն Համբարձումյանը (տե՛ս Հ ա մ բ ա Ր Ճ ու մ յ ա ն. 2012, 130–131):

Երբեմն արդի բառարաններում հանդիպում ենք վերոնշյալ հինհայերենյան արմատների, որոնք թեև ձևով նույնն են, բայց իմաստով տարբեր են, ինչպես՝ պաճույճ (ԺՀԼԲԲ, 4, 154), պալար (ԺՀԼԲԲ, 4, 146), պահանջանք (ԺՀԼԲԲ, 4, 149), սուփեր (ԺՀԼԲԲ, 4, 323), խիբ (ԺՀԼԲԲ, 2, 520), կածան (ԺՀԼԲԲ, 3, 18), տապակ (ԺՀԼԲԲ, 4, 447) և այլն: Արևմտահայերենում, սակայն, պահպանվել է կածանք արմատի նախկին իմաստը՝ «կանացի զարդ»։ այստեղից էլ՝ կածնել «զարդարվել» (ԱԱՆԲ, 148):

Պարանոցի զարդ

Վզնոց՝ «1. վզին կապելու կանացի զարդ բաղկացած ոսկիների կամ մարգարիտների շարոցից, 2. վզից կախելու հուռուլթ, հմայիլ, 3. տե՛ս փողպատ, 4. շների վզին անցկացվող կապ, վզկապ» (ԺՀԼԲԲ, 4, 410): Ինչպես հին ժամանակաշրջանում, այնպես էլ այսօր վզնոցներ կրում են ոչ միայն կանայք, այլև տղամարդիկ:

Որպես վզնոց բառի հոմանիշներ՝ Աշոտ Սուքիասյանը վկայում է՝ մանյակ, (հզվդ.) քայո, քայոամանյակ, (արևմտհ.) ճիտակ, ճրամպիտ, (հզվդ.) վղիտող, որմիսկ, (արևմտհ., բրբ.) ճտնոց «կանացի զարդ՝ կազմված արծաթ-ոսկի դրամներից», հուռուլթ (ՀԼՀԲ, 608) և այլն: Արդի արևելահայերենում վերջին տարիներին այս իմաստով սկսել է գործածվել նաև շղթա բառը:

Բարբառներում վզնոց նշանակությունը հայտնի են հետևյալ բառերը՝ բերթանան (ՀԼԲԲ, Ա, 188), զուսկ (զուքս) (ՀԼԲԲ, Ա, 426), թիլզցիկ (ՀԼԲԲ, Բ, 111), թխտիկ (ՀԼԲԲ, Բ, 117), լոխ (ՀԼԲԲ, Բ, 240), լոֆ (ՀԼԲԲ, Բ, 246) և այլն:

Վզնոց նշանակությամբ է միջին հայերենում գործածվել նաև փողպատ-ը՝ երկրորդ իմաստով (ՄՀԲ, 789), իսկ արդի գրական արևելահայերենում՝ հետևյալ բարդությունները՝ զարդաշղթա «1. զարդ հանդիսացող շղթա, 2. փխբ. զարդարանք հանդիսացող առարկաների շղթայաձև շարք» (ԺՀԼԲԲ, 2, 13), վզազարդ (ԺՀԼԲԲ, 4, 409), վզաշղթա (ԺՀԼԲԲ, 4, 410), մարգարտամանյակ (ԺՀԼԲԲ, 3, 489) և այլն:

Ոտակցական լեզվում գործածվում են հետևյալ փոխառություններն ու օտար բառերը՝ ցեպ (ԱՀԲԲ, 1475), ֆրանսերենից՝ կոլյե (ՕԲԲ, 290), կուլոն «շղթա»-յիկով մանյակից կախված թանկագին քար (ՕԲԲ, 317) և այլն:

Կրծքազարդ

Ամենահին մետաղական կրծքազարդերը հայտնաբերվել են դեռևս բրոնզի դարում և ունեցել են կենցաղային նշանակություն. օրինակ՝ կրծքազարդի միջոցով են կոճկել հագուստը: Անտիկ և վաղմիջնադարյան ճարմանդները, որոնք ամրացնում էին հագուստը, կոչվել են զարդասեղներ: Հայտնի են ինչպես հասարակ զարդասեղներ՝ առանց որևէ այլ զարդարանքի, այնպես էլ զարդաքանդակ ոսկե ճարմանդներ, որոնք նախատեսված են եղել ոչ միայն հագուստն ամրացնելու, այլև զարդարանքի համար: Երբեմն զարդասեղները պատրաստվել են ոսկուց կամ արծաթից և զարդարվել մարգարիտներով, թանկարժեք քարերով, փորագրված նախշերով և այլն⁶:

Կրծքի զարդ նշանակությունն ունեն հետևյալ բառերը՝ ապիլզակ (հզվդ.) «կրծքի զարդ» (ԺՀԼԲԲ, 1, 166), մեղալիոն «ոսկեղեն փոքր զարդ, բոլորաձև

⁶ Այս մասին տե՛ս Ի ս ր ա յ ե լ յ ա ն. 2021:

կամ ձվաձև, որի մեջ դնում են ցանկալի մարդու նկարը կամ մագերից փունջ ու կախում են պարանոցից» (ԺՀԼԲԲ, 3, 502), չքանչան «աչքի ընկնող ծառայությունների համար կառավարության կողմից տրվող մետաղե պատվանշան» (ԺՀԼԲԲ, 4, 94), արևմտահայերենում կրծազարդ (ԱՀԲԲ, 774), մետալլ «մեղալ» (ԱԱՆԲ, 218) և այլն:

Կրծքազարդի հայտնի տեսակ է եղել «սրտի կաքավ»-ը, քանի որ սրտի կրծքի մասն է զարդարել և խորհրդանշել է ուրախություն բերող կաքավ թռչունը, որի փայտե խորհրդանշը պարտադիր է եղել նաև հարսանյաց ծեսի ժամանակ⁷:

Որպես կրծքազարդեր՝ այսօր էլ գործածվում են զարդասեղներն ու գնդասեղները (քորոցները):

Բարբառներում «կրծքի զարդ» իմաստն ունեն հետևյալ բառերը՝ կոսթեղ (ՀԼԲԲ, Գ, 153), ձներ (ՀԼԲԲ, Գ, 339), դոշանոց (ՀԼԲԲ, Գ, 346) և այլն: Վանում և Մուշում տարածված են եղել ուսերից ամրացվող «շամշիկ» կոչվող կրծքազարդերը⁸:

Նոսակցական լեզվում տարածված են այս իմաստն ունեցող հետևյալ օտարաբանությունները՝ մեղալիտն (ՕԲԲ, 354), բրոշ/բրոշկա (ՕԲԲ, 108), բուտոներկա «ծաղկեփնջակալ (կրծքին ամրացնելու համար)» (ՕԲԲ, 111), ազրաֆ «չքեղ ճարմանդ՝ կոճակ՝ օղակ» (ՕԲԲ, 17) և այլն:

Գլխազարդ

Գլխազարդ բառի հիմնական իմաստն է՝ «գլխի զարդ, գլխի զարդարանք», իսկ երկրորդական իմաստներն են՝ «գրքի սկզբի կամ առանձին մասերի վերևում դրվող զարդանկար», «սյուների, դռների և այլնի վերևի մասերի զարդանկար, զարդաքանդակ, դրվագ» (ԺՀԼԲԲ, 1, 409): Որպես գլխազարդ հայերենում գործածվում են՝ արտախուլյր «1. թանկագին քարերով զարդարված կիսաթագ, 2. ապարոշ, արտախուլրակ» (ԺՀԼԲԲ, 1, 243), սալարոշ (ԺՀԼԲԲ, 1, 165), խուլյր (ԺՀԼԲԲ, 2, 601), թագ (ԺՀԼԲԲ, 2, 117) և այլ բառեր:

Դրանք հատկապես շատ են բարբառներում, ինչպես՝ ճուլթխի/ճուլթի «կանանց գլխի զարդարանք, հարդարանք» (ՀԼԲԲ, Գ, 421), թանթանա «կանացի գլխազարդ, ճակատակալ» (ՀԼԲԲ, Բ, 78), ջալչակ «կանացի գլխազարդ, որ ձգվում է ճակատի վրա՝ մի քունքից մյուսը. մարգարիտներով ու ոսկի ձողիկներով կարած ժապավեն, որի ներքևից խիտ առ խիտ շարված են մանր տաճկական ոսկի դրամներ, կտուց» (ՀԼԲԲ, Ե, 165), թամաղա «(Վան) ժապավենի նման արծաթյա զարդ, որ կանայք կապում են գլխներին» (ՀԼԲԲ, Բ, 71) և այլն:

Նախկինում գործածվող զարդերից պահպանվել են ինչպես գլխի ոսկե և արծաթե թափակներ ու սկավառակներ, այնպես էլ ճակատազարդեր, քունքակախիկներ, գլխի հարդարանքն ամրացնող չքեղ կեռեր, միատեսակ կախիկներով շղթաներ, որոնք անցնում են կզակի տակով և ամրացվում քունքերի մոտ (չավա, երեսնոց), ծամերի հետ հյուսվող զարդեր՝ ծամթելեր և գլխարկին կարվող բազմապիսի զարդեր՝ պայմանավորված տվյալ տարածաշրջանին բնորոշ առանձնահատկություններով⁹:

⁷ Ի ս ր ա յ ե լ յ ա ն. 2021, 70:

⁸ Ի ս ր ա յ ե լ յ ա ն. 2021, 70:

⁹ Ի ս ր ա յ ե լ յ ա ն. 2021, 72–74:

Որպես ճակատի զարդ գործածվում են՝ ճակատազարդ (ԺՀԼԲԲ, 3, 432), ճակատակալ (ԺՀԼԲԲ, 3, 432), բարբառներում՝ ճակտեզարդ (ԺՀԼԲԲ, 3, 433), ճակտնոց/ճակատանոց (ՀԼԲԲ, 3, 363), ճղեր (ՀԼԲԲ, 3, 399), մահմուտիա (ՀԼԲԲ, 4, 16), ջաղավաթ (ՀԼԲԲ, 5, 149) և այլ բառեր:

XIX դարից մեզ են հասել արծաթե և ապակե քունքազարդեր (Վան, Մուշ), քունքակախիկներ: Այդպիսի մի զարդ է երեսնոց շղթա-ն, որը դարձյալ կախում են քունքերի վրա¹⁰: Բարբառներում, որպես քունքազարդ նշանակող բառ, գործածվում է նաև թոթոնիկ-ը (ՀԼԲԲ, 2, 134):

Մազերի զարդ կամ մազերը կապելու հարմարանք նշող բառերից են՝ հերակալ (ԺՀԼԲԲ, 3, 345), հերակալ/հերկալ (ԺՀԼԲԲ, 3, 345), մազակալ (ԺՀԼԲԲ, 3, 458), վարսակալ/վարսկալ (ԺՀԼԲԲ, 4, 382), ծամակալ/ծամկալ (ԺՀԼԲԲ, 4, 382), դրույսք (հնց.) (ԺՀԼԲԲ, 1, 535) և այլն:

Քթի զարդ

Հայերը մինչև XIX դ. վերջերը, իսկ որոշ շրջաններում մինչև XX դ. սկիզբը քթի օղ (գինդ) են կրել ինչպես Տոսպի և Հայոց ձորի, Գավաշի, Կարճկանի ու Վասպուրականի մյուս վայրերի գյուղերում ու ավաններում, այնպես էլ Պարսկահայքում, Սասունում, Մուշում, Բիթլիսում, Հարքում, Դիարբեքիրում, Բաջաբեքում և այլուր: Դրանք եղել են ակնազարդ, գնդաձև, սկավառակաձև, ամմիջապես ուռնգին կաշող կամ կախվող: Քթին ամրացրել են նաև թեթև դրամներ կամ դրամի նմանությամբ պատրաստված զարդեր: Եղել են նաև շղթայով ականջին միացող քթի օղեր¹¹:

Քթի զարդ հասկացությունն նշող բառերը քիչ են. արդի արևելահայերենում հանդիպում ենք՝ օղ (ԺՀԼԲԲ, 4, 781), քթաօղ (ԺՀԼԲԲ, 4, 732), արևմտահայերենում ևս՝ քթադինդ (ՀԼԲԲ, 2, 1099), քթօղ (ԺՀԼԲԲ, 4, 733), բարբառներում՝ խաղեմ (ՀԼԲԲ, Բ, 261), խզմար (ՀԼԲԲ, Բ, 318) և այլն:

Այսօր ևս առօրյայում գործածում են քթի օղեր, որոնք հայտնի են քթի փիրսինգ անունով:

Ականջի զարդ

Ականջօղ «ականջի օղ, գինդ»։ Հայերի շրջանում ամենատարածված զարդերից է: Հնագույն ժամանակներից ի վեր ականջօղեր են կրել թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ: Այս մասին են վկայում ոչ միայն հնագիտական պեղումներից հայտնաբերված բազմապիսի նմուշները, այլև աստվածությունների, կուռքերի քանդակներն ու դրամների վրա արված արքաների դիմապատկերները:

Որպես ականջի զարդ՝ արդի արևելահայերենում հանդիպում ենք՝ օղ (ԺՀԼԲԲ, 4, 781), ականջադինդ (ԺՀԼԲԲ, 1, 24), գինդ (ԺՀԼԲԲ, 1, 400), կախազարդ/կախազարդիկ «ականջից կախելու զարդ, ականջօղ» (ԺՀԼԲԲ, 3, 16), թանա (հզվդ.) (ԺՀԼԲԲ, 2, 135), գորչապահանգ (օղ, գինդ) (ՀԼԲԲ, 1, 465), զարդաօղ (ԱՀԲԲ, 365), բարբառներում՝ անգջաթան (ՀԼԲԲ, Ա, 56), անկջիկ (ՀԼԲԲ, Ա, 62) և այլն:

¹⁰ Ի ս ր ա յ ե լ յ ա ն. 2021, 72:

¹¹ Ի ս ր ա յ ե լ յ ա ն. 2021, 83–85:

Թևի զարդ

Ապարանջանը դաստակին անցկացնելու օղակաձև զարդերից է, որից ունենք՝ ապարանջանավոր ածանցավոր կազմություն (ԺՀԼԲԲ, 1, 165):

Արդի արևելահայերենում ապարանջան իմաստն ունեն հետևյալ բառերը՝ բաղկանոց (ԺՀԼԲԲ, 1, 257), բաղական (ԺՀԼԲԲ, 1, 267), բաղկամանյակ (ՀԼՀԲԲ, 129), քողեք (Հզվդ.) «ապարանջան, որ կրում էին թևի վրա արմունկից վեր» (ԺՀԼԲԲ, 4, 746) և այլն: Առավել գործածական է թևնոց բառը (ԺՀԼԲԲ, 2, 183):

Այս իմաստով արևմտահայերենում գործածվում են նաև բաղկուրար (եկեղ.) (ՀԼՆԲ, 1, 265), ձեռնուրար (եկեղ.) (ՀԼՆԲ, 2, 17), բահուանդ (ԱԱՆԲ, 54) և այլ բառեր:

Ժողովրդախոսակցական լեզվում հաճախակի գործածվում են նաև բիլագուկ/բլագուկ (բրբ.) փոխառություն (ԺՀԼԲԲ, 321) ու բրապետ (ՕԲԲ, 106) օտարաբանություններ:

Ուսի հատվածում կրում են հետևյալ զարդերը՝ ուսազարդ «ուսի զարդ» (ԺՀԼԲԲ, 4, 608), անթանոց «կանացի զարդ, որ ուսից ձգվում է մինչև անութի տակը» (ՀԼՆԲ, 1, 96) և այլն:

Ձեռքի զարդ

Մատանի: Մետաղե փոքր օղ է (հաճախ վրան որևէ գոհար), որ իբրև զարդ դնում են մատներին. երբեմն վրան փորագրված է լինում տիրոջ անունը, որով կնիք են դնում փաստաթղթերի վրա (ԺՀԼԲԲ, 3, 485): Հայ եկեղեցին մատանի կրել արտոնում էր միայն եպիսկոպոսներին: Կնքամատանիները եղել են թագավորների, իշխանների և բարձրաստիճան այլ անձանց իշխանության խորհրդանշաններ: Դրանցով հաստատում, կնքում էին նամակներ, հրամանագրեր, պայմանագրեր ու այլ վավերագրեր (ՀԲԲ, 3, 266): Այդ նշանակություն ունեին Հայաստանում հնում տարածված «վարազագիր մատանիները» (ՀԲԲ, 4, 307):

Մատանին ամենաբնորոշ ու կարևոր տարրն է եղել ամուսնության ծիսակարգում: Առաջին առարկան, որ տրվում էր աղջկան՝ ի նշան ամուսնության առաջարկության, մատանին էր: Մինչև այսօր հարատևում է հարսին նշանի մատանի հանձնելու սովորությունը՝ իբրև գույգի միությունը վավերացնելու խորհրդանշան, բարբառներում այն անվանվում է նշան/նիշոն՝ «1. նշան, 2. նշանադրության ժամանակ փեսացուի կողմից հարսին տրված ոսկյա մատանի կամ այլ զարդ՝ իբրև հավաստիք նշանադրության» (ՀԼԲԲ, Դ, 164), իսկ խոսակցական լեզվում տարածված է կապո օտարաբանությունը՝ որպես ամուսնության խորհրդանշան:

Արևմտահայերենում գործածվում են մատնի (ԱԱՆԲ, 265), բուլթման (ԱԱՆԲ, 63) բառերը, բարբառներում՝ ալիանս «խոսքկապի ոսկե մատանի» (ՀԼԲԲ, Ա, 16), մանիկ «մատանի» (ՀԼԲԲ, Դ, 23), մաննա/մաննիք (ՀԼԲԲ, Դ, 24) և այլն:

Այլ զարդեր

Ուտքին անցկացնելու, կրելու զարդերից է ոտնապարանջանը (ԺՀԼԲԲ, 4, 114)¹²:

¹² Այս մասին տե՛ս Ի ս ր ա յ ե լ յ ա ն. 2021, 61:

Կոնքի հատվածում կախվող զարդ է կոնքեռը «(եկեղ.) եկեղեցական զարդ՝ տարանկյուն զուգահեռագծի ձևով, որ հայրապետը կախում է ձախ ազդրի վրա» (ԺՀԼԲԲ, 3, 183):

Կան զարդերի անվանումներ, որոնք նախատեսված են զգեստի համար, ինչպես՝ փեշազարդ «զգեստի փեշերին կարվող զարդ» (ԺՀԼԲԲ, 4, 646), թռան «(հնց.) զարդ չրջագգեստի համար» (ԺՀԼԲԲ, 2, 230), զարդակոճակ «կոճակ, որ իբրև զարդ է գործածվում» և այլն:

Կան զարդեր էլ, որոնք այլ նպատակներով են գործածվում, օրինակ՝ թագ-բե/թագբեհ «զանազան ձևի ու մեծության հուլունքաձև հատիկների շար, որի հատիկները մատերով շարժում են իբրև զբաղվելու միջոց, տերողորմյա» (ԺՀԼԲԲ, 2, 195), թալիսման/թիլիսման/թլիսմ «ըստ սնտրիապաշտական պատկերացման մի այնպիսի առարկա, որ ունեցողին բախտ է շնորհում, փրկում է չարից, փորձանքից, դժբախտությունից» (ԺՀԼԲԲ, 2, 125), կախազարդ, որը խոսակցական լեզվում տարածված է նաև բրելոկ օտարաբանությամբ, հուռուկ/հուռուկք «1. հմայություն, կախարդություն, 2. հմայակ, հմայիլ, այն իբր որին հուռությունամբ պահպանիչ գորություն էին տալիս» (ԺՀԼԲԲ, 3, 401), որից հուռությունք «հուռութի ուլունք, կղարթք, բժժանք» (ԺՀԼԲԲ, 3, 401), թլացք/թլեր «հուռութք» (ԺՀԼԲԲ, 2, 205) և այլն:

Զարդերի մեջ շատ են գործածվում հուլուն/հուլունքներ՝ «1. զանազան նյութերից պատրաստված և թելի վրա շարված հատիկներ որպես պարանոցի զարդարանք, 2. այդ հատիկները որպես կախարդության միջոց» (ԺՀԼԲԲ, 3, 398), որից ունենք՝ հուլունքաշար, հուլունքաշարան, հուլունքաշող բաղադրությունները (ԺՀԼԲԲ, 3, 398) կամ ուլունք «ծակ (ապակյա, կավե, սաթե և այլն) զարդազնդիկներ» (ԺՀԼԲԲ, 4, 581), որից՝ ուլունքահատիկ, ուլունքաշար, ուլունքե (ԺՀԼԲԲ, 4, 581) և այլն:

Այժմ ունենք մանրաուլունք «մանր ուլունք» նորաբանությունը (ՆԲ, 131):

Այսօր ևս կարևոր նշանակություն ունեն թանկարժեք մետաղներից, հատկապես ոսկուց և արծաթից, պատրաստված զարդերը:

Ոսկի. «1. դեղնագույն փայլուն, շատ տարածական ազնիվ մետաղ (19,5 տեսակարար կշռով), 2. ոսկուց շինած իրեր՝ զարդեր, ոսկեղեն, 3. զանազան արժողությամբ ոսկեղրամ, ոսկուց կտրած փող» (ԺՀԼԲԲ, 4, 110): Արմատից բառակազմական կաղապարների ու ձևերի բազմազանությամբ հայերենում ունենք զանազան բաղադրություններ, ինչպես՝ ոսկե, ոսկյա, ոսկերիչ, ոսկեբեր, ոսկեգոտի, ոսկեզօծ, ոսկեթագ, ոսկեխառն, ոսկեփոշի, ոսկելի/ոսկելից, ոսկեծայր, ոսկեկազմ, ոսկեկերտ, ոսկեկնիք, ոսկեկոթ, ոսկեկուռ, ոսկեհեռ, ոսկեհանույթ, ոսկեհանք և այլն (ԺՀԼԲԲ, 4, 105–107): Կան նաև այս բառով բաղադրված զարդերի և թանկարժեք քարերի անվանումներ՝ ոսկեղեն՝ «ոսկե իրեր, ոսկուց շինած զարդեր» իմաստով (ԺՀԼԲԲ, 4, 108), ոսկեօղ «ոսկե օղ ունեցող, վրան ոսկե օղ» (ԺՀԼԲԲ, 4, 110), ոսկեզմրուխտ «քաղքեղոնաքարի տարատեսակը, խնձորականաչ գույնով կիսաթանկագին քար» (ԺՀԼԲԲ, 4, 106), ոսկեքար «ոսկեգույն-կանաչավուն թանկագին քար, քրիզոլիտ» (ԺՀԼԲԲ, 4, 110), ոսկեբյուրեղ «թանկագին, կանաչագույն կամ դեղնականաչ բյուրեղաքար» (ԺՀԼԲԲ, 4, 105) և այլն:

Արծաթ. «1. ազնիվ սպիտակ-մոխրագույն մետաղ, 2. արծաթեղեն, արծաթյա զարդարանք, արծաթե ամանեղեն, 3. (հզվդ.) դրամ, առավելապես արծաթ-

յա դրամ» (ԺՀԼԲԲ, 1, 224) և այլն: Արմատը ևս բառակազմական մեծ հաճախականություն ունի, ինչպես՝ արծաթե, արծաթյա, արծաթային, արծաթեղեն, արծաթադրամ, արծաթազարդ, արծաթաօծ, արծաթաբեր, արծաթազին, արծաթազուլ, արծաթազործ, արծաթաթել, արծաթակերտ, արծաթապատ և այլն (ԺՀԼԲԲ, 1, 225–226):

Սովորաբար ոսկու և արծաթի, ինչպես նաև թանկագին այլ առարկաների հարստությունը հայերենում ընդունված է կոչել գանձ (ԺՀԼԲԲ, 1, 371): Իսկ կանացի այն զարդարանքները (ականջօղեր, մատանիներ, թևնոցներ և այլն), որոնք պատրաստված են ոչ թանկարժեք մետաղներից և քարերից, խոսակցական հայերենում ընդունված է կոչել բիժուտերիա («(Ֆր.) ոսկյա իրերի վաճառք») (ՕԲԲ, 93), այսօր նաև՝ բիժու: Վերջերս այս շարքը համալրվել է բազմաթիվ նորագույն փոխառություններով, ինչպես՝ փիրսինգ (օղ փորի, ականջի, քթի, շուրթերի, լեզվի և այլն) (ՕԲԲ, 589), չոկեր (անգլ.՝ choker, խեղդող) «կարծ վզնոց», քաֆֆ (ականջօղ), չարմ (կախազարդ), սեթ, մոնո-ականջօղ և այլն:

Եզրակացություն

Անդրադառնալով «անձնական զարդարանք» իմաստային խմբի քննությանը՝ վեր ենք հանել հայերենում առկա զարդերի անվանումներն ու դրանց իմաստային և բառային տարբերակները, բառակազմական հնարավորությունները: Պարզվում է, որ զարդ հասկացություն նշող բառերի և բազմաթիվ թանկարժեք քարերի անվանումներ մեզ են հասել V դարից (կամ ավելի վաղ շրջանից), որոնք, ըստ ծագումնաբանության, դասվում են հետևյալ խմբերի՝ ա) բնիկ հայերեն բառեր, բ) իրանական փոխառություններ, գ) հունական փոխառություններ, դ) ասորական փոխառություններ, ե) արաբական փոխառություններ, զ) թյուրքական փոխառություններ: Առանձին խումբ են կազմում անհայտ ծագման բառերը: Այդ զարդանվանումների մեծ մասն այսօր գործածական չէ: Քիչ բառեր են պահպանել իրենց նշանակություններն արդի գրական հայերենում: Վերջինս համալրվել է նորանոր կազմություններով, փոխառություններով և օտար բառերով: Դրանք առանձնանում են հետևյալ խմբերով՝ պարանոցի զարդ, կրծքազարդ, գլխազարդ, քթի զարդ, ականջի զարդ, թևի, ձեռքի զարդ և այլ զարդեր, որոնք նախատեսված են զգեստի կամ այլ նպատակներով գործածելու համար: Զարդերի մեջ թանկարժեք մետաղներից արժեքավոր են ոսկին և արծաթը, որոնցից բաղադրվել են նորանոր բառեր ու զարդերի անվանումներ:

Լուսինե Ղամոյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ իմաստային դաշտերի քննություն, գրական և խոսակցական լեզուների փոխհարաբերություն, բառազործածության մեջ ճիշտ և սխալ ձևերի ուսումնասիրություն: Հեղինակ է 1 մենագրության, ավելի քան 40 հոդվածի և համահեղինակ՝ 1 գրքի: ORCID:0009-0003-6552-5254.

lgamoyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1642 էջ:

Աճառյան Հր. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 698 էջ, 1973, հ. Բ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 687 էջ, 1977, հ. Գ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 635 էջ, 1979, հ. Դ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 674 էջ:

Աճառյան Հր. 2013, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 364 էջ:

Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ. 1979, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, «Ի Սրբոյն Ղազարու», 1140 էջ:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. 1969, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 601 էջ, 1972, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 714 էջ, 1974, հ. 3, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 574 էջ, 1980, հ. 4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 828 էջ:

Իսրայելյան Ա. 2021, Հայուհիների զարդերը 18–20-րդ դդ., Երևան, «Անտարես» հրատ., 216 էջ:

Համբարձումյան Վ. 2012, Նոր դիտարկումներ Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ի մի քանի բառի վերաբերյալ. – Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, «Ջանգակ» հրատ., էջ 130–140:

Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001, հ. Ա, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 427 էջ, 2002, հ. Բ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 431 էջ, 2004, հ. Գ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 425 էջ, 2007, հ. Դ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 451 էջ, 2008, հ. Ե, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 418 էջ:

Հայրապետյան Ա. 2011, Օտար բառերի բառարան, Երևան, Հեղ. հրատ., 642 էջ:

Հովհաննիսյան Լ. 2012, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, 2-րդ մաս, Երևան, «Գիտություն», 180 էջ:

Ղազարեան Ռ. Գրաբարի բառարան, 2000, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 683 էջ, 2000, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 657 էջ:

Ղազարյան Ռ. Ավետիսյան Հ., 2009, Միջին հայերենի բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 834 էջ:

Ճերէճեան արքեպիսկոպոս Գ., Տօնիկեան Փ. Կ., Տէր Խաչատուրեան Ա. 1992, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Պէյրութ, Վ. Տօնիկեան եւ որդիք հրատ., 1300 էջ, 1992, հ. 2, Պէյրութ, Վ. Տօնիկեան եւ որդիք հրատ., 1206 էջ:

Մալխասեանց Ստ. 1944, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երևան, ՀՍՍՌ պետհրատ, 608 էջ, 1944, հ. 2, Երևան, ՀՍՍՌ պետհրատ, 512 էջ, 1944, հ. 3, Երևան, ՀՍՍՌ պետհրատ, 614 էջ, 1945, հ. 4, Երևան, ՀՍՍՌ պետհրատ, 646 էջ:

Նոր բառեր (կազմողներ՝ Գալստյան Ա., Հովսեփյան Գ., Սահակյան Ա., Սահինյան Լ.). 2015, Ա պրակ, Երևան, «Գիտություն» հրատ., 195 էջ:

Ջահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 747 էջ:

Ջահուկյան Գ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ» հրատ., 819 էջ:

Սարգսյան Ա. 1991, Արեւմտահայերենի բառարան, Երևան, «Արեւիկ» հրատ., 316 էջ:

Սաքապետոյեան Ռ. 2011, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երեւան, «Տիգրան Մեծ» հրատ., 382 էջ:

Սուքիասյան Ա. 2009, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1236 էջ:

անգլ. – անգլերեն
արևմտՀ. – արևմտահայերեն
բրբ. – բարբառային
եկեղ. – եկեղեցական
ժղ. – ժողովրդախոսակցական
Հզվղ. – Հազվադեպ
Հնց. – Հնացած
փխբ. – փոխաբերական
Ֆր. – Ֆրանսերեն

ЛУСИНЕ ГАМОЯН

Резюме

Ключевые слова: «персональные украшения», смысловая группа, заимствование, браслет, кольцо, серьга, ожерелье, нагрудник (брошь), украшения для головы и волос, золото, серебро.

В армянском языке, в семантической (тематической) группе «персональные украшения» общим словом является слово «украшение», обладающее большой словообразовательной активностью. Первые украшения появились вместе с одеждой, являясь выражением не фантазии и эстетики, а мистических идей. Имеются свидетельства названий различных видов драгоценных камней и украшений V века (или ранее), которые по генеалогии представлены следующими группами: а) исконно армянские слова, б) иранские заимствования, в) греческие заимствования, г) ассирийские заимствования, д) арабские заимствования, е) тюркские заимствования.

Орнаменты классифицируются по следующим видам: шейный орнамент, нагрудный орнамент, головной орнамент, носовой орнамент, ушной орнамент, нарукавный орнамент, ножный орнамент и другие украшения, предназначенные для использования в нарядных или иных целях. Среди драгоценных металлов выделяют также золото и серебро, составленные из них слова и названия украшений.

Լусине Гамоян – к. филол. н., старший научный сотрудник отдела современного армянского языка Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: исследование семантических полей, взаимоотношение литературного и разговорного языков, изучение правильных и неправильных форм в словоупотреблении. Автор 1 монографии, более 40 статей и соавтор 1 книги. ORCID:0009-0003-6552-5254. lgamoyan@mail.ru

SEMANTIC (THEMATIC) GROUP “PERSONAL JEWELRY” IN ARMENIAN

LUSINE GHAMOYAN

Summary

Keywords: personal jewelry, semantic field, borrowing, bracelet, ring, earring, necklace, bib (brooch), head and hair jewelry, gold, silver.

In the Armenian language, in the semantic (thematic) group “personal jewelry” the common word is the word “ornament”, which has a great word-forming activity. The first jewelry appeared together with clothes being an expression not of fantasy and aesthetics, but of mystical ideas. There is evidence of names of various kinds of gems and jewelry of the 5th century (or earlier), which, according to genealogy, are represented by the following groups: a) native Armenian words, b) Iranian borrowings, c) Greek borrowings, d) Assyrian borrowings, e) Arabic borrowings, f) Turkic borrowings. Words of unknown origin are also highlighted.

Ornaments are classified into the following types: neck ornament, chest ornament, head ornament, nose ornament, ear ornament, arm ornament, leg ornament and other ornaments intended to be used for dressy clothes or other purposes. Among the precious metals, gold and silver, words made up of them and names of ornaments are also distinguished.

Lusine Ghamoyan – Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Department of Modern Armenian Language of the Institute of Language after H. Acharyan of NAS RA. Scientific interests: study of semantic fields, relationship between literary and spoken languages, study of correct and incorrect forms in text processing. Author of 1 monograph, over 40 articles, co-author of 1 book. ORCID:0009-0003-6552-5254. lgamoyan@mail.ru